# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

## ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ

ՈՒՍՏԻ՞ սրտիս զանդոհական կրբել կիրս ·
Զուր փոփոխեմ զվաստակ, զհանգիստ և ըղձիրս ·
Ոչինչ զօրայս հանգուցանէ դեգերմանս ·
Համայն ուրեք ընդոյն գտանեմ զանձկութիւնս ։
　　Ո՜ն, զհեշտութեանց առցուք ճաշակ ։
　　Յառա՛ջ մատիք շնորհք և գըրգանք,
　　Եկա՛յք ժըպտուք և սէր և խաղք,
　　Եւ անուշից դուք խառնարանք ։
Բայց զի՞նչ է այս · ահա խամրեալ ծորի վարդ,
　　Յընդեալ բաժնի հոտ քաղցրաբոյր,
　　Խողու քընար ըղձեաս թափուր,
Զանձիրք զըժնեայք դառնան 'ի սիրտ արդ և արդ ։

　　Հա՛պա, 'ի դաշտն ելցուք Բռեայ ·
　　Պատմնեպըսակ ճակատուն շուք
　　Համածեսցէ տարց՞ 'ի բացեայ
　　Բզխեղդ սըրտիս հեղձամըղձուկ ։
　　Ո՛ն անդր · հընչեաց շաւինդըն խաղմիկ ·
　　Հողմն սուսերք, շանթեն շառափք,
　　Տրոփեալ վըրնջէ նըժոյգ ռազմիկ,
　　Բաղխեալ կոփեն զէնք և երկաթք ։
　　Ի ձայնս յաղթից և յաղթելոց
　　Սարսեալ հեծէ բարձր Ոլիւմպոս ։
　　Խաղան զինեւ յորդ ճապաղիք ·
　　Սիրտ ոչ ժուժէ, գեղուն աղիք ։

　　Բարդ հաշտագոյն կոչեն զիս փառք,
　　Մ՛երթ վեհիմացք եւ մերթ վայրագ ·
　　Հրամանահան բազմեալ 'ի բարձ
　　Իշխան երկրի եւ ջուրց ալեաց
　　Օրէնս յաշխարհ տամ յընդհանուր,
　　Ու անձինս իշխել ջանամ 'ի զուր ։

　　Ընդուլ այսգունակ առ յոյս նորանոր
　　Պտիմեալ ըղձակաթ՝ դառնամ կորակոր ·
　　　Յերանութիւն իմն յայսց օտար՝
　　　Բաղխէ հոգիս թեւս անդադար ·
　　Եւ ոչինչ ոչ զօրէ յիրաց կենցաղոյս
　　Զանմահութեան նուաճել յիս բուռըն հրապոյրս ։

　　Յորժամ յօրհասին պաշտէ իմաստուն
　　Զանձողոպրելի դատակնիք մահուն,

Աստուած ազդէ նմա . Իմ է յաւերժութիւն
Որ նախն էր քան զքեզ , քո է՝ որ յետոյն :
Այլ զի՞ զանձանս ես բաժանիմ .
Յաւիտենից ոչ է կըրճիմ .
Զհամայնն 'ի քեզ զուգեաց Աստուած
Նկարեալ ըզկեանս քո յաւիտեանց ,
Եւ զէութիւն քո ապագայ
Անհուն մըտացն ունէր ներկայ :
Արդ լեր Հաստչին քում արժանի ,
Կամ յաւերժից բաղդիդ պատկառ ,
Եւ վեհ լըւեալ նորայն ձայնի
Ընտրի գոյից լեր ոտընհար :

Զի՞ փոքր է այս երկիր՝ յերկնից թէ կաս դէտ .
Եւ իմ գոռոզն հըպարտութիւն գոյ հանդէտ .
Գետնասողից որդանց նըման
Բըռնաւորաց մարդագետնոյ ,
Որոց հաղիւ կըշռեալն ական
Յուղէ զնախանձ ծիղ մի խոտոյ :
Մեծք՝ առ տըգէտս համարեալ այդք
Պըրծնեալք 'ի գեղ ունայնութեան
Զի՞նչ թըւիցին 'ի հեռուստ անդ
Յերկնից բարձանց Անմահութեան :
Այս տեսութիւն ծընող վըսեմ իմաստից ,
Այս ապագայ՝ վեհ քան զօրէնս հըպարտից ,
Զուգակըշիռ պահէ ուղղեալ զաղտ զաշխարհ
Եւ Բարձրելոյն հանդէպ ըզլինաւն հաւասար ,
Զծաղր անցաւոր եւ զանցաւոր արտասուս .
Բառնայ զչարեաց դառնս , հեշտիցն ըզհաճոյս ,
Եւ ըզզօրըն սիրտ կըրթէ 'ի բարձունս :
Առ ոտս հարեալ զհիւլէն՝ յերկինս ելեալ ճեմ՝
Զի՞ փոյթ նըմա քննել զերկիր վայրադէմ ,
Թէ ծագիցէ՞ անդ արեւ , շանթք հարուցեն ,
Թէ գուցէ՞ անդ աւագ , հըղօր , դիւցազուն .
Թէ մարտիցե՞ն , կռիցե՞ն դաշինս հաշտութեան ,
Թէ բաղդ տայցէ՞ կամ բառնայցէ՞ զգաւազան :
Որ 'ի բարձանց գահաւանդի
Տեսանելով ըզյորդ Նիւղոս
Դարձուցէ զաչս յափանց անտի
Ու 'ի կոհակացըն պերճահոս ,
Եւ առուակի լուիցէ փոքու
Որ առ ոտիւք նմա առնուցու :
Լռեցէք սնոտի մեծութիւն , գո՛յք վաղանցուկք ,
Անգիտութիւն , գիտութիւն , շուք եւ անշուք .
Բաց 'ի յամբիծ վարուց եւ բաց յեղերանց
Ու ակն ածելոյ յարդարադատ իրաւանց ,
Դըժխին հանուրք յաւերժապէս հաւասար ,
Զիջեալ հանդէպ ճշմարտութեանն անաչառ :

Այսպէս 'ի բարձըր գագաթանցն Ապենին
Հետախաղաղ արարեալ զձոր ընդ լերին՝
Զաշխարհս ամէն ցուցանէ դաշտ հարթ յատակ,
Ի կէտ ծրարեալ խուն՝ զհորիզոնն ընդարձակ ։

Ո՛հ, թէ վըսեմն ազդումն որ զմեծըն Հոմեր
Եւ զքաջն երկնեաց Էսկիւղոն՝
Ալպերտ մըտաց հնարք եւեթ էր
Կամ առասպել ցնորք անըմբռն,
Ըզմէ 'ի հուսկն ասպարէս
Զարհուրելով յոչընչէն տես
Ընկըրկի մարդ սոսկապէս ։
Եւ կամ զխո՞րդ 'ի կենցաղում անկայուն
Ընդգըրկէ զայս յաւերժութեան հաստատուն ։
Ո՛չ, ո՛չ, չէ՛ այդ վարկած մնոտի .
Ազդումն է խոր ուանդըրդուելի,
Յարարչական աջոյն դրոշմեալ 'ի յոգիս
Գոլ ուղղութեանց տածիչ, հերքիչ խեւ ախտից ։
Յաւիտենական բազմեալ 'ի գահոյս
Հաշտն Անմահութիւն 'ի յանսասան կայս՝
Արհաւիրս չարաց, լուաց տայ խրախոյս,
Ի հըսկայաքայլ ժամանակի °նթացս
Պաշտպանէ զարդար, բառնայ °մպարըշտաց
Ըզայս գըժպըհի ոչընչին վայրաց ։

Դուք որ չառնոյք ակն յՈլիմպեայ կայծականց
Եւ ըզսեղանս քանդէք յաւերժն իրաւանց՝
Սեղմինչք երկրի, երկերո՛ւք,
Այո՛, անմահք էք եւ դուք ։
Եւ դուք անգութըն բաղդի սպանդք վաղանցիկ
Յոր ակնարկէն աստուածեան աչք հայրենիք
Դուք անցաւորք յօտար երկրի առօրեայք,
Զօրացարո՛ւք քանզի եւ դուք էք անմահք ։
Եւ ո՞վ կացցէ սիրտ անըզգայ
Առ կարեւորս այս պիտոյս .
Զըրփեալ մարդոյ °նդ ահ եւ յոյս՝
Եւ յետ կենացն ըզկեալ ցանկայ .
Եւ յօթեւանս իսկ 'ի մահուն
Շիրիմ զատիւք ճակատ յերկրին՝
Հանէ ցաթոռն իսկ Բարձրելոյն
Յուրանն ըզայս սոնք դիակին ։
Դրոշմէ 'ի պղինձ ըզյիշատակ ժանգահար,
Եւ ընդ նըմին՝ զունայնութիւնն հիգաբար .
Յարձանս յաղթիցն՝ 'ի նիշ փառաց զաղփաղփուն՝
Զանմահութիւն փորձէ 'ի փորձս անդ մահուն ։

Դո՛ւք միայն ո՛վ սիրեցեալք ո՛վ հրաշալիք,
Իմ նախանձորդք, զօրութիւն մեհ իմն ունիք

Անմահունակ կանգնել արձանս դուք եւեթ ,
Ոյք կըկնակի պըճնեալք յերկնից սեթեւեթ
Պըսակս հիւսէք առաքինեաց համճարոց ,
Ձեռք ձեր շնորհեն , ճակատք ձեր զայն ընդունին .
Հոմեր հաղորդ է դիցն իւրոց 'ի բագին ։
Եւ թէ երբէք առ մարդելոյզ փաղաքշանս
Ի նուաստութիւն իջուցէք զերգըս ձեր պանծ ,
Յաճախագոյն սակայն 'ի նուագ վսեմական՝
Զօրէնս յարգէք , և սէր վառէք հայրենեաց ։
Վաշտ 'ի վաշտէ Ընթանայր քերդող ռազմանուտ
Գրգռէր 'ի մարտ զերխտասարդս եռանդունս ,
Զ Արէս վառէր Տիրտէ 'ի հուր կիզանուտ .
Եւ շանթք տաղից Ալկեայ՝ ընկճեն ցարդ ըզբռռունս ։
Ի տղայ տիոցս ես առեցի զբռնաւորս ,
Ըզյաղթական կառօքն հարեալ զիմ նըզովս .
Անզօրս ես ծաղր առնեմ զահեղ նոցայն կար ,
Զկատոն գովել ոչ զանգիտեմ առ Կեսար ։

Եւ չեմ դողալ 'ի սպառնալեաց
Բռնաւորի մի ապառում .
Չիցէ իմ այլ վայր հայրենեաց
Ի սփոփականն համդերձելում ։

Այսպէս մինչ բնաւն երկրակալին խոնարհէր՝
Մեծահոգին Կատոն եւեթ՝ կայր վըսեր .
Ընաւ ըզշռխնդըրն բըքաբեր փոթորկաց ,
Եւ զանքըննին յաւերժութիւն ըզմտաւ ած .
Ուսէր յաջում եւ ըզՊղատոն 'ի ձախուն՝
Նըզիմք քերքեալ զահ բռանց , գելոց , նախանձուն՝
Ինքնին մնաեւ բաղդին իւր կայր միայնակ .
Մին ըզմահ , միւսըն խոստանայր յաւերժ կեանք .
Աշխարհ թող ծունր ածցէ Ընկճողին ըզՏիբեր ,
Հոգի սորա գնայ յապաստանն իւր յեթեր [1] ։

Վերջին ասէ . Ազատ եմ ես ,
Եւ օրհասին՝ թէ Անմահ եմ ։
Արդ 'ի շիրմաց տարայք համդէս
Ուր ըսպասեն հարքն երկնաճեմ ,
Տարայք ըզպանձն այն նըշխար՝
Որ եւ յաղթեաց 'ի մահու
Յաղթականին փարսաղու
Արշկահելոյն ըզԿեսար ։

Զուր յաղթասէր սա յառաջէր պերճանգամ ,
Ամբոխն ազատ , թէպէտ զյետին զայն անգամ ,
Շուրջ բոլորեալ զգերեզմանաւ մահագոյժ
Զվէհազունին Հռովմայեցւոց լայր ըզյուշ
Նախանձաբեկ ըզկառս՝ դագաղն անդ արար ,
Յաղթանակեաց Կատոն , ոչ եւս է Կեսար ։

1 Զքանասունդծեցն երկինս շնորհեցուք Կատովնի . իցէ ըստ գեղեցիկ յուսոյ անմահութեան հոգւոյն՝ յուսով ակն կալեալ էր և հրամանի արձակման նորին 'ի Հաստուէն ։

Այլ զո՞վ ձայնեմ... Ո՛վ ցանկալի հայրենեաց
Մարաստական ինձ մանկունք, ո՛վ Փառանկաղունք,
Որք գնայք զըրկեալք յերկրէդ, 'ի տանց եւ յերդեաց,
Էք լուսութեամբդ առ 'ի բաղդէն անմըրկունք.
Արկածք վտանգիդ՝ ոչ, ոչ ըզմահ ձեզ կարդան,
Արուորագոյնք՝ տարմյք կենաց վըշտահան ։
Որ զօրավիգն ազնիւ սըրտից ձեր 'ի դէպ. —
Հաւատք՝ որ վարձ կշռէն առ կրիցդ երաշխէպ.
Յաղէտս անգամ'նա զձեզ գործէ երջանիկ,
Ազատ՝ 'ի կապս, ընչեղս՝ մինչ ոչն ինչ ունիք,
Եւ 'ի բանտից անկիւնս՝ յերկին դուք ընակիք ։
Օ՛ն անդր 'ի բա՛ց ամպարըշտին ժանտ առած,
Որ երկոցուն նեցկացս ածէն ըստուերած,
Թէ՝ " Արդարոյ ըմբոն է վարձ
„ Ու անիրաւին արկանել սանձ „.
Չէք յոյս մարդոյ՝ ոյր չիցէ ահ եւ կասկած ։
Այսպէս զուգեալ եւ միաբան
Անմահութիւն ընակն երկնից՝
Մերասլանոյ թեւակից
Ընդ իմաստունն Ազատութեան ։

Իսկ դո՞ւք, դուք ո՛վ իմոյ սրտիս սիրելիք
Միթէ յանպո՛ւրծ դուք 'ի կորուստ մատնիջիք.
Ոչ. արշալոյս թէ կեանքս աւուր մ'են պայծառ,
Յա՛յլ ընակութիւն ապա գտցուք մեք զիրար.
Տեսցուք դարձեալ ըզմիմեանս ո՛վ բարեկամք,
Եւ ո՛հ, քանի՜ հանդիպեսցուք խընդութեամբ ։
Յեթերական բարձր 'ի մութից
Աչս արձակեալ գըթարկուս՝
Ոչ եւս լուծցուք յարտասուս,
Բայց առ հրճուանս եւ մտերմութիւնս ։

Բայց ցերբ յերկրի աստ պանդըխտիք տարագիր՝
Մըտազբօսիցն 'ի փոյթ լերուք արուեստից,
Պիւրին չարիքդ՝ ոյց անհրաժեշտ է վըճիռ,
Խառնին ամոքք 'ի յարտասուացըդ կըսկիծ ։
Այլ մի պղծել ըզհուրն 'ի ձեզ եռանդուն.
Թողէք ըզմեղկ հեշտից քընար ուերգ նորուն.
Մեծացուցէք զայր վեհաշուք
Օ առաքինին երգեցէք դուք.
Եւ ձայնք՝ վըսեմք լիցին 'ի վեհ նախերգմանս
Հանդերձելոցդ երգոց յերկնից 'ի խորանս ։

ՏՐԼԻԼ.